

Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ. Արրահամյանի անվան ավագ դպրոց»

ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

*Թեմա՝ «Գործնական աշխատանքների կազմակերպումը համագործակցային
ուսումնառության մեթոդը»*

Անցկացման վայրը՝ Մարտունու Տ. Արրահամյանի անվան ավագ դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբուրյան

Ուսուցիչ՝ Մարինե Մուրադյան

Դպրոց՝ Լիճքի հիմնական դպրոց

2022 թ.

Մարտունի

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գործնական աշխատանքի կազմակերպում
3. Համագործակցային ուսուցման մեթոդներ
4. Օրինակելի դասի պլան 1
5. Օրինակելի դասի պլան 2
6. Եզրակացություն
7. Գրականության ցանկ

Ներածություն

Տարրական դասարաններում երեխաների մտածողությունը հիմնականում ակնառու – պատկերավոր և ակնառու - գործնական է: Պետք է այնպես կազմակերպել ուսուցումը, որ այն նպաստի վերացական մտածողության զարգացմանը: Այսօր յուրաքանչյուր աշակերտ պետք է հեռու լինի սահմանափակ, կաղապարված մտածողությունից, նա պետք է կարողանա թափանցել ցանկացած խնդրի, պրոբլեմի խորքերը, վերլուծել տվյալ երևույթը, կարողանա կատարել համադրում, համեմատում և այլն: Նրա միտքը պետք է կարողանա վերանալ կոնկրետից, ակնառու – պատկերավորից և հասնել վերացական մակարդակի: Երեխաները պետք է կարողանան ինքնուրույն լուծել ցանկացած ուսումնական խնդիր, վերլուծել և դուրս գալ պրոբլեմային իրադրությունից: Մակայն տարրական դասարաններում «մտածել» սովորեցնելու այս գործընթացը կարելի է կազմակերպել զննականության կիրառմամբ: Թեմայի նպատակն է ուսումնասիրել գործնական աշխատանքների կազմակերպումը համագործակցային մեթոդով:

Ելնելով թեմայի նպատակից առաջ ենք քաշել մի շարք խնդիրներ.

1. Բացահայտել գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացը,
2. Գործնական աշխատանքների կատարման արդյունավետությունը համագործակցային ուսումնառություն մեթոդներով,
3. Պլանավորել և իրականացնել հետաքրքիր և ուսուցանող դասեր,
4. Նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետությանը և բարելավմանը:

Գործնական աշխատանքների կազմակերպումը

Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- *վերարտադրողական*, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),
- *մասամբ որոնողական*, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),

ստեղծագործական, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի աշակերտներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում: Աշակերտին պետք է հասկանալի դարձնել մաթեմատիկական տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած

տեսական գործընթացը գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը: Աշակերտների մեջ նման կարողության (գործնական կարողության) առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև աշակերտների մեջ գործնական կարողությունների ձևավորման համագործակցային ուսուցման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու և համագործակցելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս :

Ուսումնական առարկայի բովանդակության առանձնահատկություններով են պայմանավորվում տեսության և պրակտիկայի կապերի ձևերը: Այդ կապերը բացահայտելու տրադիցիոն միջոց են (նաև գործնական աշխատանքի տեսակ) էքսկուրսիաները, զանազան լաբորատոր աշխատանքները, որոշակի պրակտիկ գործողությունների իրականացում պահանջող հանձնարարություններն ու առաջադրանքները (իրերի և նրանց մոդելների պատրաստում, կենցաղային իրավիճակներում հաշվարկների կատարում, բնական որևէ երևույթի դիտում ու մեկնաբանում և այլն): Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև աշակերտների ունեցած անձնական փորձը:

Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի

- նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին, ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար
- անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն), վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում
- ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում, վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:
- Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

Գործնական աշխատանքները կարելի է հանձնարարել ինչպես թեմայի ուսուցումը սկսելուց առաջ, այնպես էլ թեմայի (տեսական նյութի) ուսուցումն ավարտելուց հետո:

Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքներ

Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում: Դրանք գնահատման ենթակա չեն

Տեսական գիտելիքը հիմնավորող և ամրապնդող գործնական առաջադրանքներ

Այս խմբի մեջ կարելի է դասել բոլոր այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել այս կամ այն տեսակի հմտության ձևավորմանը (թվաբանական գործողությունների կատարում, հանրահաշվական արտահայտությունների ձևափոխում և պարզեցում, տրված նախնական պայմաններին բավարարող մոդելների պատրաստում, երկրաչափական պարզագույն կառուցումների վրա հենված խնդիրներ, շրջապատող առարկաների բնութագրիչների չափում և դրանցով պայմանավորված հաշվարկներ և այլն) 4 : Հետագոտական բնույթի գործնական առաջադրանքներ Այս խմբի մեջ կարելի է դասել այն առաջադրանքները, որոնց կատարումը պահանջում է ինքնուրույն հետազոտության իրականացում, երևույթների կամ օբյեկտների հատկությունների, օրինաչափությունների, փոխադարձ կապերի բացահայտում և մաթեմատիկական հիմնավորում: Նման առաջադրանք հանձնարարելիս որպես հուշվածք կարելի է տալ երևույթի կամ օբյեկտի զգացական ընդհանուր մեկնաբանությունը, նրանում նկատվող որոշակի օրինաչափությունները: Ուսուցիչը պետք է հնարավորություն տա աշակերտին գործնական և հետազոտական աշխատանքների միջոցով գտնել իր հարցի պատասխանը: Նման դեպքերում աշակերտը ստանձնում է ակտիվ մտածողի, հետազոտողի դեր: Աշակերտը պետք է, որքան հնարավոր է, ինքնուրույն աշխատանքի մեծ փորձ ձեռք բերի: Բայց, եթե նա միայնակ թողնված է խնդրի հետ՝ առանց որևէ օգնության, կամ, եթե այդ օգնությունը անբավարար է, ապա դա կարող է ոչ մի օգուտ չտալ նրան: Եթե ուսուցչի օգնությունը չափից ավելի է, ապա ոչինչ չի մնա աշակերտին անելու: Ուսուցիչը պետք է օգնի, բայց ոչ չափազանց շատ և ոչ չափազանց քիչ: Պետք է օգնել այնպես, որ աշակերտին մնա աշխատանքի խելամիտ բաժինը: Նման պարագայում աշակերտը ներգրավվում է ինքնուրույն աշխատանքի մեջ, դուրս է գալիս պասիվ լսողի դերից և ստանձնում ակտիվ մտածողի դեր: Եթե անգամ աշակերտի ուժերից վեր է կատարել ավելին, ապա ուսուցիչը ծայրահեղ դեպքում պետք է ստեղծի ինքնուրույն աշխատանքի պատրանք: Նշանակում է ուսուցչի օգնությունը պետք է լինի զգույշ և չափավոր: Գերադասելի է, որ ուսուցիչը տեսնի դժվարությունների աղբյուրը, հարց տա կամ ցույց տա այն քայլը, մինչև որը աշակերտը կկարողանա եզրակացության գալ ինքնուրույնաբար:

Պետք է դասը հետաքրքիր դարձնելով օգնել աշակերտին՝ ուսուցման գործընթացում ձեռք բերելու ինքնուրույնություն, հանդես բերել նախաձեռնություն, սովորեցնել: Օրինակ, եռանկյունների նմանության թեման ուսումնասիրելիս կարելի է հանձնարարել, որ աշակերտը տեսրում գծի համապատասխանաբար հավասար անկյուններով մի քանի եռանկյուններ, հաշվի դրանցից յուրաքանչյուրի կողմերը գրանցի եռանկյունների համապատասխան կողմերի երկարությունները աղյուսակում: Այնուհետև կատարելի է կատարել հետևյալ հարցադրումը. և խելամիտ հուշվածքների միջոցով աշակերտին բերել եռանկյունների համապատասխան կողմերի երկարությունների հարաբերությունների հաստատունության փաստին: Նախագծային բնույթի գործնական աշխատանքներ Ուր էլ գնա դպրոցի շրջանավարտը, նա պետք է լինի որոնող, ստեղծագործող, ձևափոխող: Այսինքն պետք է ունենա կյանքում իր առաջ ծագած խնդիրների լուծումները գտնելու կարողություն: Աշակերտների մեջ նման կարողություն կարելի է զարգացնել, եթե ուսուցման ընթացքում մեծ տեղ հատկացվի նախագծային բնույթի հանձնարարությունների կատարմանը: Նման հանձնարարությունները խթանում են տեխնիկայի զարգացման գործում մաթեմատիկայի ունեցած դերի բացահայտմանը, ստեղծագործելու, կատարելագործելու հմտությունների ձևավորմանը, միջառարկայական կապերի բացահայտմանը, մտածողության զարգացմանը: Նախագծային բնույթի հանձնարարությունների կատարումը աշակերտներից պահանջում է ոչ միայն առարկայական գիտելիքերի առկայություն, ինչը խիստ կարևոր է, այլև ունեցած գիտելիքները կոնկրետ պայմաններում կիրառելու և տեսությունը պրակտիկայի պահանջներին ծառայեցնելու կարողություն: Մասնավորապես, որպես նշված կարողությունները զարգացնող առաջադրանք կարելի է առաջադրել տարածական պատկերների մոդելների կառուցմանը վերաբերող առաջադրանքներ, որոնց ընթացքում աշակերտը ստիպված է լինելու դիտարկել այդ մոդելների փոփոխված կամ մոդելների առանձին տարրերի պրոյեկցիաները, և հետագոտելով դրանք, որպես հարթաչափական պատկերներ օգտագործել դրանց երկրաչափական հատկությունները: Գործնական աշխատանքների կատարումը առավել արդյունավետ է համագործակցային ուսումնառություն իրականացնելիս:

Համագործակցային ուսուցումը

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն² Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում² Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնալու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում : Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում :

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը² Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ.

Դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրունության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը² [2] Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը, այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը² Ուստի մեր խնդիրն է դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում: Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը² Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն² Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից,

- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից,
- ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,
- ժամաքանակից
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը. Համագործակցային ուսուցման տարրերը Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը՝ Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է: Համագործակցային աշխատանքի առավելությունները: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել՝ Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝ Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն→ ժամանակակից հասարակության մեջ: Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և→ համագործակցելու [3]: Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանցմղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցումը՝ Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում՝ Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին: Փոքր խմբերով աշխատելու առավելությունները: Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը՝ Այդպիսի խմբերում

աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից՝ Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին՝ Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը՝ Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում՝ Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները [1].

զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,

- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր
- հաջողությունն ապահովելու հարցում, խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու
- հմտությունները դրսևորելու համար, քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների
- համոզմունքները, ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման
- հնարավորություն:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք: 1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է

աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին: 2. Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2», որի փուլերն են. նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,

- աշխատանք փորձագիտական խմբում
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

3. Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում: 4. Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման 341 փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հասկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը

յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը: Օրինակ՝ «Այ քեզ բա՛ն, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է» (Կարինե Թորոսյան և ուրիշներ, «Մայրենի 4, էջ 62»): Քանի որ բնագիրը ծավալուն է, այն բաժանում ենք երկու մասի և յուրաքանչյուրից ընտրում հավանական բանալիները և կողպեքը: I հատված. Բանալիները՝ 1. Ուշացել են նրանք, ովքեր զոհվեցին: 2. Ինչու՞ զոհվեցին, հայրի՛կ: 3. Կովում էին: Կողպեքը՝ - Կովում են հանուն հայրենիքի, զոհվում են հանուն հայրենիքի, զոհվում են իրենց պատվի, արժանապատվության համար: II հատված. Բանալիները՝

1. – Ա՛յ հեր, հլա ասա հասկանամ, էդ մեր ամեն ինչի դասատուն որ ասում է, թե հանուն հայրենիքի, դա ո՞րն է...

2. – Էս ծաղկած հողը, որին հեր ու տղա նստել ու իրար կարոտ ենք առնում, էս հողը, որ մեզ հաց է տալիս:

3. – Ամեն, ամեն ինչ, ինչ տեսնում ու չես տեսնում, հայրենիք է, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է: Կողպեքը՝ -Ես նայեցի կապույտ-կապույտ երկնքին, մեր ծմակին, սարի ճամփին, քարափի կարմիր-կարմիր պուտերին, հորս շունչն առա, նայեցի նրան, զգացի, որ ամեն ինչ՝ հայրս էլ հետը հայրենիք է: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն: 5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադասման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ բոլորի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Ներկայացված է օրինակելի դասի պլաններ, որտեղ ցույց է տրված գործնական աշխատանքների կատարումը համագործակցային ուսուցման մեթոդների կիրառմամբ:

Օրինակելի դասի պլան 1

Առարկա - Մայրենի

Դասարան - երրորդ

Աշակերտների քանակ -14

Տևողություն – 45 րոպե

Դասի տիպը- խառը

Օգտագործվող մեթոդներ - «Հնգյակի մեթոդ», «Շարադրություն 10 րոպեում», «Երկու աստղիկ, մեկ դրոշակ», «Պրիզմա», «Մտագրոհ»

Դասի թեման - «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց» Հ. Շիրազ

Դասի նպատակները՝

Ակադեմիական - Ստուգել, թե որքանով են յուրացրել տրված գիտելիքները և կարողացել են ժամանակակից տեղեկատվական միջոցներից օգտվել ու տեղեկություն քաղել թեմայի վերաբերյալ (տեղեկություն Մաշտոցի կյանքի, գործունեության, ստեղծագործական ուղու մասին):

Հմտությունների զարգացման -Աշակերտների մոտ ձևավորել առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտություններ: Ցույց տալ խմբային աշխատանքի առավելությունները: Կարողանալ գնահատել իր և ընկերոջ աշխատանքը: Կարողանալ խոսել հայեցի , կիրթ, մտքերն արտահայտել դիպուկ:

Արժեքային համակարգը- Կկարողանան ըստ արժանվույն գնահատել հայոց տառերի տեղն ու դերը մեր պատմության մեջ:

Դաստիարակչական – Կտոգորվեն հայրենասիրության բուռն զգացումով, ուսման հանդեպ սիրով ու ձգտմամբ, համեմատականներ կանցկացնեն և արժանի ձևով կգնահատեն իրենց արդեն ծանոթ մեր անզուգական Մեծերի տեղն ու դերը հայերիս գոյության պայքարի ճանապարհին: Կսովորեն միմյանց հանդեպ օգտակար լինել:

Դասարանի կահավորումը-Ցուրաքանչյուր խումբ պետք է նստի մեկ սեղանի շուրջ , որի վրա պետք է լինեն անհրաժեշտ բոլոր պիտույքները : Գրատախտակից կախված կլինի Մեսրոպ Մաշտոցի նկարը, հայերենի ասեղնագործ տառերը, տառանուններով այբուբենը, մեծադիր աղյուսակ, որտեղ լուսաբանվում է տառերի թվային նշանակումը:

Հաջողության չափանիշները – Խմբի բոլոր անդամները պետք է կարողանան բացատրել իրենց թեման և պատասխանել իրենց ուղղված հարցերին:

Վերահսկում, միջամտում – Անընդհատ մոտենալ խմբերին, հետևել նրանց աշխատանքին և պատասխանել այն հարցերին, որոնք առաջացել են խմբի անդամների մոտ:

Առաջադրանքների ներկայացում- Առաջադրանքների պատասխանները ներկայացվում են խմբի անդամների կողմից, իսկ պատասխանը կախում գրատախտակից: Խմբի կամայական անդամ պետք է ներկայացնի այն:

Գնահատումը – Խմբի յուրաքանչյուր անդամի գնահատում են խմբի անդամները, իսկ խմբին՝ դիտորդները: Դասին առավել ակտիվ աշակերտները ներկայացվում են խրախուսանքի և գնահատվում են դասամատյանում:

Դասի ընթացքը-Դասարանի պատուհանները ծածկված են ծածկոցով և դասարանում կիսամութ է, երեխաները նախօրոք բաժանված և նստած են 3 խմբով՝ առաջինում 4 հոգի, երկու խմբում էլ՝ 5 հոգի: Ներս է մտնում ուսուցիչը և սկսում՝

Չորրորդ դարի երկինքը սև

Հանկարծ մի պահ ծիածանվեց

Հրաշափայլ հենց այդ պահին

Հայոց հողում Մաշտոց ծնվեց

Երբ մեծացա, հայրը նրան

Ուսման ճամփեց,

Ու Մաշտոցը գնաց, շրջեց,

Մուշից անցավ Վան ու Սասուն՝

Զգաց լեզուն ազգապահպան

Կամաց-կամաց հեռանում է

-Միայն գիրը, գիրը,-

Բոցավառվեց Մաշտոցն հանկարծ , -

Միայն գիրը պիտի հաղթի

Այս խավարին ազգահալած:

Գիրն ստեղծեց և լույսը տիրեց հայոց ազգին:

Այդ պահին պոկվում են ծածկոցները և դասարանում տիրում է արևի լույսը:

Երեխաները , աշխուժանալով, փորձում են կիրառել «Մտագրոհ» մեթոդը և գրատախտակին գրված «Հայոց այբուբեն» բառակապակցության շուրջ գրում են իրենց կարծիքները:

Ստուգվում է տնային հանձնարարությունները:

Մի քանի հոգի գեղեցիկ արտասանում են բանաստեղծությունը:

Առաջին խմբին հանձնարարվում է չափածո բանաստեղծությունը ներկայացնել արձակ ձևով: Օգտվելով «2 աստղիկ և 1 դրոշակ» մեթոդից՝ ներկայացնել վերջինիս 3 կետերի շուրջ իրենց կարծիքը և հավաքեն խճանկարը:

Երկրորդ խմբին հանձնարարվում է «Պրիզմա» մեթոդով աշխատել «Այբուբեն» և «Հաղթանակ » բառերի շուրջ, նաև առաջարկել մյուս խմբերին , որ օգտվեն թվերը հայերենի այբուբենի տառերով նշանակելու պաստառից և լուծեն առաջարկված պարզ խնդիրները, նաև կասեն ջերմ բառեր ու կպահանջեն դրանք գրել տառանունների միջոցով, համեմատականներ կանցկացնեն և լրացնեն համապատասխան տեղում:

Երրորդ խմբին հանձնարարվում է օգտվել տանը պատրաստած տեղեկություններից և լրացնել «ԳՈՍ» աղյուսակը հայկական գրի ու դպրության մասին, Մաշտոցի գործունեության ժամանակաշրջանի մասին:

Յուրաքանչյուր խումբ տրամադրված ժամանակի լրանալուց հետո կներկայացնի իր աշխատանքը, մյուսները կանեն լրացումներ: Այսքանն անելուց հետո կերգեն «Հայոց տառեր» երգը: Վերջում 3 խմբին էլ կհանձնարարվի օգտվել «10 բուսական շարադրություն» կամ «Հնգյակ» մեթոդներից և ամփոփել օրվա դասը:

Վերջում կկատարվի գնահատում և կհանձնարարվի տանը գրել փոքրիկ շարադրություն՝ «Իսկ ինչ կանեմ ես իմ հայրենիքի համար» վերնագրով:

Օրինակելի դասի պլան 2

Առարկա- Մաթեմատիկա

Դասարան – IV

Թեմա- Մաս և ամբողջ

Տիպը- Հաղորդման

Նպատակները .

- Գաղափար ունենալ ամբողջի և դրա մասերի մասին
- Կարողանալ պատկերը բաժանել համապատասխան մասերի, նշել դրանք, արտահայտել կոտորակով
- Կարողանալ համադորձակցել դասընկերների հետ
- Կիրառել գիտելիքները գործնականում

Մեթոդներ- Համառոտ դասախոսություն, կանխագուշակում, դիտում, գույգերով աշխատանք, գործնական աշխատանք, մտազրոհ

Ընթացքը –Խիկ համակարգով

Խթանման փուլ- Դասն սկսել խաղ- առաջադրանքի կատարմամբ: Դասարանը բաժանել խմբերի:Յուրաքանչյուր խմբին տալ մեկ ամբողջական պատկերի մասերի բաժանված կտորներ /երկրագունդ, զինանշան, բնապատկեր/:Խմբերը պետք է հավաքեն և ստանալ ամբողջական պատկերը: Հաղթում է այն խումբը, որը արագ և ճիշտ է կատարել: Առաջադրանքի կատարման ընթացքն ու իմաստը մեկնաբանել աշակերտների հետ միասին: Առաջադրանքի կատարման ավարտից հետո կփորձեն գուշակել , թե ինչ թեմա ենք ուսումնասիրելու: Այնուհետև հարց ու պատասխանի միջոցով խոսել ամբողջ և մաս հասկացությունների մասին, կազմել նախադասություններ այդ բառերով՝ շեշտելով դրանց իմաստային առանձնահատկությունները նախադասություններում:

Այնուհետև խմբերին հանձնարարել խնձորը հավասարապես բաժանել երկու ընկերների միջև , հետո՝ չորս ընկերների : Աշակերտի պատասխանները և կատարած գործողությունները մեկնաբանելուց հետո ներկայացնել նոր նյութը սահիկների միջոցով: 2-րդ և 3-րդ սահիկներում տարբեր պատկերների միջոցով ներկայացված է ամբողջը և դրա մասերը, 4-րդ և 5-րդ սահիկներում ընդգծված են պատկերների մասերը , աշակերտները կնշեն,թե որ մասն է ընդգծված կամ հակառակը՝ որ մասը ընդգծված չէ և կգրեն մասն արտահայտող թիվը գրատախտակին:

Այս ամենից հետո հանձնարարել խմբերին գործնական աշխատանքը նախապես գրված թերթիկների վրա: Քառակուսին /շրջանը, ուղղանկյունը / ծալել այնպես, որ ստացվի 4 մաս / 2մաս, 6 մաս/ և ներկել $\frac{1}{4}$ / $\frac{1}{2}$, $\frac{1}{6}$ / մասը: Կատարած աշխատանքն ամփոփելուց հետո կատարել առաջադրաքներ : N844-ը երկու աշակերտներ կկատարեն

գրատախտակին: Առաջինը հատվածի $\frac{1}{2}$ մասը կնշի, երկրորդը՝ $\frac{1}{4}$: 847 համարի առաջադրանքը կատարելուց առաջ վերհիշել մեծությունների չափման միավորները խաղի միջոցով:

Առաջադրանքի մեկնաբանությունը կլինի սահիկով, այնուհետև աշակերտները կգրեն գրատախտակին և տետրում: Բավարար ժամանակ ունենալու դեպքում կկատարենք նաև տրամաբանական առաջադրանք /853/:

Կատարել դասի անդրադարձ և գնահատել խմբերի կատարած աշխատանքները

Եզրակացություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները: Ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ դասը հետաքրքիր դարձնելով օգնել աշակերտին՝ ուսուցման գործընթացում ձեռք բերելու ինքնուրույնություն, հանդես բերել նախաձեռնություն, սովորեցնել համագործակցել, կարողանալ համեմատել, համադրել, ստացած գիտելիքները կիրառել գործնականում, ստեղծել նորը և ձգտել կատարելագործմանը:

Գրականության ցանկ

1. Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Էդիթ Պրինտ», Երևան 2018, :

2. Ադամյան Ն., Գրիգորյան Ա., Գոլյան Գ., Կենսաբանության համագործակցային դասերի պլանների նմուշներ, Հանրապետական գիտ. նստաշրջան, Նյութերի ժողովածու, Գյումրի, ԳՊՄ-ի, 10.11- դեկտեմբեր 2007, «Դպիր» հրատ., 2008,

3 Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ»:

4. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:

<http://gspi.am/media/journal/2014n1b/37.pdf>

https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_80.html